ՆՈՐԻՑ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԱՍԻՆ*

ԼԵՎՈՆ ՋԵՔԻՅԱՆ (Վենետիկ)

Այս վերջին տարիներու ընթացքին գլխավորապես երեք առիթներով անդրադարձեր էի Պատմահոր գործին և անոր հարակից հարցերու։ 1986-ին՝ Հայ միջնադարյան գրականության Ա միջազգային դիտաժողովին՝ «Ազգային «գաղափարախոսությունը» և պատմության ըմբռնումը Մովսես Խորենացիի մոտ» զեկույցով[1], 1987-ին՝ «Վաղ քրիստոնեության մասին հետազոտություններ» ու Հռոմի ԺՁ հանդիպման, և դարձյալ նույն տարին Միլանի մեջ՝ «Մերձավոր և Միջին Արևելքի լեզուներով ընկալված դասական բնագիրներու վերագյուտին» նվիրված Զ հանդիպումին։ Այս վերջին երկու հանդիպումներուն ներկայացուցած զեկույցներուս նյութերն էին ըստ կարգի՝ «Հելլենականություն, եբրայականություն և քրիստոնեություն Մովսես Խորենացիի մոտ. Տվյալներ՝ ազգության աստվածաբանության մը համար»[2], «Դասական ժառանգություն և եբրայական բաղկարարներ Մովսես Խորենացիի մոտ. Հայկական համադրումը ի խնդիր «Քաղաքակրթության» և ազգության նոր հորիզոններու»[3]։

Ներկա հոդվածը կզետեղվի սերտ շարունակականության մը մեջ սույն հետազոտություններուն հետ՝ ըլլա մեկնողաբանական (herménetique), ըլլա մեթոդաբանական նախադրյալներուն նկատմամբ։ Բայց ի տարբերություն առաջինին, որ կներկայանար առավելապես իբր ընդհանուր ներածություն մը

---

* *Այս գրությունը ներկայացված է իբր զեկույց, ֆրանսերեն լեզվով, 1991-ի հունվարին, Փարիզ կայացած խորենացիագիտական դիտաժողովին՝ Պատմահոր մատյանին ԺԵ դարադարձի հոբելյանին առթիվ։ Հայերենի ներկա վերածումը կատարված է հեղինակին կողմե։*

[1] L' «ideologie» nationale de Movsēs Xorenac'i et sa conception de l'histoire— *«Հանդես ամսօրյա», ՃԱ. 1987, էջ 470—485։ Թերևս ավելորդ իսկ է նշել, թե Խորենացիի գաղափարախոսության, կկարծեմ, առանցքը կազմող «ազգ» իմացումը կամ ստորոգությունը* (catégorie)՝ *ներիմացական տարբեր բովանդակություն մը ունի Արևմուտքի մեջ լուսավորապաշտ գաղափարախոսության և ասոր քաղաքական ամենեն հատու արտահայտությունը կազմող ֆրանսական հեղափոխության ծիրին մեջ և ազդեցությամբ զարգացած ազգի իմացումեն, որ ուներ անշուշտ իր արմատները Արևմուտքի նաև միջնադարյան կազմակերպության մեջ։ Մյուս կողմե չեմ տեսներ ոչ անհրաժեշտությունը, ոչ ալ արդարացում մը՝ արևմտյան ավանդության և տեսության մը մենաշնորհը դարձնելու այդ հղացքը, որ ունեցած է նաև տարբեր պատմություններ և զարգացումներ։ Ինչպես երևան կուգա թե այս հիշյալ աշխատանքես և թե այն մյուսներեն՝ որ պիտի հիշվին (տե՛ս ծան. 2 և 3), «ազգի» իմացումը Խորենացիի մոտ ունի գաղափարային նշելիորեն ինքնատիպ խտություն մը, որ որոշակիորեն կգերազանցե ծննդաբանական ու տոհմագրային իմաստաբանական* (semantique) *ծիրերը։*

[2] Ellenismo, ebraismo e cristianesimo in Mosè di corene (Movsēs Xorenac'i). Elementi per una teologia dell'etnia, *Augustinianum*, XXVIII (1988), XVI Incontra di Studiosi dell' Antichità Cristiana, *Cristianesimo e Giudaismo: Eredità e confronti*, 7—9 maggio 1987, pp. 381—390.

[3] Eredità classica e componenti ebraiche in Mose di Corene (Movsēs Xorenac'i). La sintesi armena in cerca di nuove frontiere della „civiltà" e dell'etnia, *ընդ մամլով՝ Autori Classici in Lingue del Medio e Vicino Oriente, Հռոմ, հրատարակությունը նախատեսված 1993-ի ընթացքին։*

Խորենացիի գաղափարային աշխարհին և մտածման կառույցներուն, ներկայով կփափաքիմ, ինչպես արդեն առաջինին հաջորդող մյուս երկու զեկույցներուն մեջ, խորացնել մասնավոր մեկ երեսակը խնդրո առարկա աշխարհին և կառույցներուն։

Ներկա ուսումնասիրության նյութը պիտի կազմե՝ հարաբերությունը ընդմեջ Պատմության տվյալ, շոշափելի հոլովույթին և անոր ավարտման, լրումին, ինչպես Խորենացի զանոնք կըմբռնե ու կներկայացնե։

Արդարև, Խորենացիի համար կա հայ պատմության ավարտաբանություն (eschatologie) մը կամ, լավ ևս, ավարտաբանություն մը նույնինքն Հայաստանի՝ իբր պատմական և ազգային էացում, որքան ալ նման վարկած մը տարօրինակ կարենա թվիլ—անկասկած՝ շատ եզական, պատմական համադրի մը նկատմամբ՝ որ զայն «դուրսեն» կկարդա։

Այս հավաստումը հարցադրումներու ամբողջ շարք մը կարծարծե՝ սույն ավարտաբանական տեսության բնույթին, ծագումին, հատկանիշներուն, բայց մանավանդ իմաստին և արժեքին շուրջ, որոնք հազիվ պիտի կարենանք ուրվագրել ներկա զեկույցի սահմաններուն մեջ։

Ամեն ավարտաբանություն[4], իր բնույթով իսկ, կենթադրե լարում (tension) մը, մանավանդ թե խզում մը։ Լարումը՝ ընդմեջ ներգործ (actuel) հառաջընթացքի (processus) մը և այդ նույն հառաջընթացքին, առավել կամ նվազ չափով ընդոստ, դադարման կամ փոխակերպումին։ Սակայն Խորենացիի մոտ ավարտաբանության հարցը կբարդվի՝ նույնինքն ավարտաբանության շատ ուժգին գաղափարականացման և որով «դաղափարաբանացումին» իբր հետևանք։ Արդարև, Խորենացիի մոտ, ավարտաբանությունը կարծես կմտնե, հարակարծորեն, պատմության իսկ հոլովույթին մեջ, պատմության՝ որ կշարունակվի և չի ավարտիր։ Կարելի է ըսել՝ թե ասոնք են երկու հիմնական տարածքները, բնականաբար՝ ներհակադիր, ավարտաբանության խորենացիական «ապորիային» երկբայանքին։

Ներկա ուսումնասիրության ընթացքին մեր գլխավոր առաջադրանքը պիտի ըլլա, ուրեմն, ուրվագրել հունները այն բազմաթիվ հոսանքներուն՝ որոնք կդիմեն դեպի հանգուցակետերը, ուր ավարտաբանական տրամասությունը կտարրալուծվի, բայց նաև կվերածնի։ Վերածնություն մը՝ որու իմաստը հետզհետե պիտի պարզվի ներկա ուսումնասիրության ընթացքին։

Ըսինք թե ավարտաբանության հղացքը (concept) ինքնին լարում մը կներմուծե տվյալ իրականության նկատմամբ, ինչ որ ալ ըլլան այդ լարումին հանգամանքն ու ձևերը։ Այդ իրականությունը, որ խնդրո առարկա պարագային՝ իր էությամբ իսկ՝ շարժման, հեղաշրջումի մեջ գտնվող իրականություն մըն է, այսինքն՝ պատմությունը, Խորենացիի կողմե բաղահատորեն կզետեղվի զինք իր տևողության, բայց մանավանդ իր լինելության, իր փոխակերպումին մեջ բնորոշող երկու հակադիր բևեռներու միջև. սկիզբը և

---

4 «Ավարտաբանություն» հղացքը կգործածեմ իբր մեկնողաբանական ստորոգություն՝ ինչպես նրան կուգա կրոնքներու պատմությենեն։ «Ավարտաբանություն» բառը ինքնին բավական նոր է, ներմուծված նախ՝ անգլոսաքսոն աշխարհին մեջ, անցյալ դարուն, և հաջորդաբար տարածված՝ հատկապես կրոնքներու պատմության և Ս. Գրքի մեկնության (exégèse) հետազոտություններու ազդեցությամբ։ Զայն առաջին գործածողը Արևմուտքի մեջ եղած է ԺԷ դարու երկրորդական աստվածաբան մը՝ Ա. Կալով, իր *Systematis locorum theologicorum 12: Eschatologia sacra* (1677) գործին մեջ։ Ավարտաբանության մասին տե՛ս, մասնավորապես, «eschatologie» եզրին ներքև՝ J. Galot. *Dictionnaire de Spiritualité*. IV/1, 1960; Th. Mahlmann. *Historisches Wörterbuch der Theologie*. II, Basel/Stuttgart, 1972; P. J. Zwiweblowsky. *The Encyclopaedia of Religion*, հ. 5 և մանավանդ *Theologische Realencyclopädie*-ի գանազան հեղինակներու մշակումով լայնածավալ հոդվածը (X, 1982)։ Տե՛ս նաև «telos» եզրը՝ G. Delling. *Theologisches Wörterbuch zum Neuen Testament*, VII, 1969 (խաչ. Քրդ՝ հ. ԺԳ, 1981)։

կատարածը։ Ասոնք ալ, ինչպես հակադիր բևեռներու ամեն երկանդամություն (binome), փոխադարձաբար կառնչվին իրարու փոխառնչությամբ մը՝ որ միանգամայն անհրաժեշտ է, հիմնված՝ փոխադարձ կախումնավորության վրա, և որ կներայժմեանա (s'actualiser) շնորհիվ նույնինքն Պատմության հառաջընթացքին՝ որ այդ բևեռները կկապե իրարու։

Կրնանք ուրեմն, Խորենացիի գործին մեջ զատորոշել առաջին լարում մը, ընդհատակյա, որ այդ գործը ծայրե ի ծայր կներանցե։ Լարում մը՝ որ կզարգանա ժամանակի համակարդյալներուն ուղղությամբ։ Ջայն կարելի է, հետևաբար, որակել իբր ուղղաձիգ կամ ուղղահայաց, ինչպես է նույնինքն ժամանակի հոսքը՝ որու անընդհատ և հանհունս թավալող րոպեներեն ոչ մեկը մյուսին հետ միահաղույն կտրվի կամ կիրականանա, որ՝ ուրեմն՝ իր տարածքին վրա չի համասեռիր, չամբողջարկվիր երբեք։

Այս առաջին լարումը՝ ուղղաձիգ և արմատական միանգամայն, որ է ինքնին ծնուցիչը պատմության հառաջընթացքին, կներանցվի, իր կարգին, այլ հառաջագայյալ լարումներէ՝ ուղղաձիգ թե հորիզոնական։ Այս վերջիններս, որ կզարգանան միջոցային համակարդյալներուն ուղղությամբ, կհատանեն ուղղաձիգ լարումները՝ ինչպես և իրար, հյուսերով ցանց մը ներուժային (dynamique) լարումներու կամ, լավ ևս, լարումի ներուժայնություններու, որոնք պատմության թե՛ շարժիչները և թե՛ հոսանքները կկազմեն։

Կարելի է հետևյալ գլխավոր խումբերուն կամ «բնորդներուն» վերածել Խորենացիի Պատմության ուղղաձիգ հառաջագայյալ լարումները՝ որոնք, յուրաքանչյուրը, կկերպագրվին միանգամայն իբր տրամասական հառաջընթացքներ[5]։

Ա. Տրամասությունը՝ ընկերային խմբավորումներու—ցեղ, տոհմ, ժողովուրդ, ազգ ևլն—կազմության, կազմավորման, ամրապնդման, վայրէջքին։

Բ. Տրամասությունը՝ պատմական գիտակցության և հիշողության։

Գ. Տրամասությունը՝ «քաղաքակրթության»։

Դ. Տրամասությունը գրական մշակույթի կազմության, որ՝ Խորենացիի համար՝ կատարն է քաղաքակրթության։

Ե. Տրամասությունը՝ պատմական հիշողության վերակառուցման։

Ի տարբերություն նախընթացներեն, որոնց շարժումին ուղղությունը էապես հառաջահայաց է, այս վերջին տրամասությունը կրկնակի շարժում մը կներփակե, հառաջահայաց և հետահայաց միանգամայն։ Հառաջահայաց՝ իր թիրախներով և վախճանականությամբ, հետահայաց՝ իր վերակառուցիչ քայլարկումով (demarche)։ Խորենացիի գործը լրիվ տիտղոսով կզետեղվի սույն տրամասության ներուժայնության մեջ։ Ան կդառնա արտահայտությունը, թանձրացյալ ներայժմեացումը այդ տրամասության։ Կարդանիշը՝ Հայաստանի և հայերու պատմական գիտակցության։

Իսկ հորիզոնական լարումները Խորենացիի Պատմության, որոնք կզարգանան միջոցային համակարդյալներուն ուղղությամբ, կրնան համախմբվիլ հետևյալ նախատիպերուն ներքև.

---

[5] Այս հառաջընթացքներու բովանդակությունը վերլուծած եմ վերոհիշյալ նախընթաց աշխատություններուս մեջ։ Ներկա հոդվածին սահմանները չեն թույլատրեր խորացնել անոնց տրամասականության նկատողությունը, ինչ որ կհուսամ կատարել հաջորդական առիթով մը։ Այդ վերոհիշյալ աշխատանքներու հրատարակութենեն կամ ավարտումեն ասդին՝ նոր ուսումնասիրություններ եկած են ճոխացնել խորենացիագիտության անդաստանը։ Հիշեմ հատկապես Giusto Traina-ի գործերը՝ Pensiero storico armeno e pensiero classico: origini e sviluppi di un incontro ideale, *Atti del V Simposio Internazionale di Arte Armena*, Venezia, San Lazzaro, 1992, pp. 785—805; *Il complesso di Trimalcione. Movses Xorenac'i e le origini del pensiero storico armeno* (=Eurasiatica. Quaderni del Dipartimento di Studi Eurasiatici. Università degli Studi di Venezia, 27), Venezia, San Lazzaro, 1991; Movsês Xorenac'i entre technique et analogie. զեկուցում ներկայացված՝ 1991ի հունվարի Փարիզի վերոհիշյալ գիտաժողովին (տե՛ս ստորանիշով ծանոթություն)։

Ա. Երկրալարային (geodetique) Լարումներ։

Ասենք կծագին Հայաստանի աշխարհագրական գիրքն, որու հավասարակշռության առանցքները հաճախ կփոփոխվին։ Փոփոխումներ, որոնք իբր կարևոր ազդակ մը կներկայանան՝ Հայոց պատմության Խորենացիի կողմե երեք գլխավոր շրջաններու բաժանման համար։ Տեսնենք շատ հակիրճ կերպով այդ երեք շրջաններուն հատկանիշները։

Առաջին շրջանը կհատկանշվի դերակշռությամբը՝ ըստ էության հավասարակշռվող կամ հավասարակշռությունները հիմնովին չխախտող լարումներու, մեկ թե մյուս կողմեն, հաղթանակով կամ պարտությամբ՝ ըստ պարագային։ Այսպես՝ Հայկ և Բել, Հայկազունները և Ասորաբաբելացիները, Հայկազուններն ու Մարերը, Հայկազուններն ու Պարսիկները։ Ուժալարերու (vecteur) բովանդակ կշիռը կդարգնա եռանկյունաձև նախագծի մը համաձայն՝ մեկ կողմե ընդմեջ Հայաստանի և հարավի, մյուս կողմե՝ ընդմեջ Հայաստանի և Իրանյան Արևելքի (Արևմուտքը բոլորովին բացակա չէ, բայց տակավին՝ բուն իմաստով՝ լարումի առանցք մը չի կազմեր)։

Երկրորդ շրջանը կհատկանշվի, գլխավորապես, դեպի արևմուտք տեղաշարժովը՝ դեպի հարավ բացվող լարումի առանցքին։ Այս տեղաշարժով կգրվի և կհռչակվի միաժամանակ Հայաստանի պատմական ճակատագիրը՝ իբրև «առանձնաշնորհյալ» կովախնձոր ընդմեջ տվյալ պահու գերհզորներուն։ Սակայն, այս «միջին» շրջանի Հայաստանը—շրջան մը՝ որ կբնորոշվի նաև իբր «հառաջադիմության»—կովախնձոր մը չէ լոկ։ Այդ գարերուն՝ Հայաստան նաև զորություն մըն է, մանավանդ թէ ակնածելի զորություն մը։

Այս միջին շրջանը կհանգի շրջադարձի մը՝ որ և կփակե զայն և որ նույնպես պիտի դրոշմե իր անշփոթելի կնիքը Հայաստանի ճակատագրին վրա, ինչպես ըրած էր արդեն լարումի առանցքներուն տեղափոխությունը, բայց տարբեր դիտանկյունե մը։ Այդ շրջադարձն է՝ Հայաստանի պաշտոնական կամ պետական դարձը քրիստոնեության։ Հայաստանի ճակատագրին նկատմամբ այս երկու բախտորոշ դրվագները, որոնցմե մին կբանա, մյուսը կփակե սույն շրջանը, կբացատրեն ասոր՝ «միջին» կամ «հառաջադիմության» շրջան նկատվելու հանգամանքը։

Երրորդ և վերջին շրջանը կհատկանիշվի երկրալարային այնպիսի լարումներով՝ որոնք այլևս ուղղություն չեն փոխեր, Հայաստանի դիրքն ու դրությունը, իր պատմական ճակատագրականությամբ, արդեն սահմանված է։ Ընդհակառակն, լարումի առկա առանցքներուն դուրսեն բանեցուցած ճընշումը կհասնի պայթումի և ներպայթումի (implosion), խորտակումի և քայքայման աստիճաններուն։ Այսպես՝ թագավորությունը պիտի բաժանվի, հուսկ դադրելու համար։ Հայկական «ավարտն» է, ըստ Խորենացիի։ Բայց կա բան մը, որ այդ ավարտը «ավարտաբանության» կփոխակերպե։ Սահակ և Մեսրոպ ու իրենց գործը։ Շարունակենք, ուրեմն, Պատմահոր մեր վերծանումը։

Բ. Կառուցային լարումներ։

Հայ ընկերության կառուցային լարումները կարտահայտեն Խորենացիի մոտ, իր կողմե բնանյութայնաբար, «կազմակերպված» և ընդգծված ձևով, այն ինչ որ անպակաս մոտիվ մը կկազմե հայ պատմագրության մեջ և զոր կրնանք մեկ խոսքով որակել իբր հայկական «հատվածապաշտություն»։

Սույն կառուցային լարումները կբովանդակեն, սակայն, միանգամայն—և Խորենացի լավ կգիտակցի ասոր—հայկական վերապրումին սերմերը ինքնին։ Հավասարակշռություն մը՝ անկայուն, բայց հուսկ նաև աննվաճելի՝ որովհետև անկայուն։ Ապակեդրոնացում մը, բայց առաջնորդված և միավորված՝ հավաքական գիտակցութենե մը հասարակաց արժեքներու, որոնց գերագույն խորհրդանիշները կհանդիսանան Սահակ և Մեսրոպ։

Հիմա հարկ է, որ պահ մը վերամփոփենք համառոտիվ հիմնական արդյունքները իմաստաբանական վերլուծումին՝ զոր կատարեր էինք մեր վերո-

հիշյալ առաջին ուսումնասիրության մեջ, որուն կհղենք մանրամասնություններու և բնագրային նկատողություններու համար[6]։

Հոն դիտել կուտայինք, որ եթե ավարտ մեկ կողմե կնշանակե «վերջ», մյուս կողմե կնշանակե նաև «կատարում», այսինքն՝ «կատար հանգում», «լրում» կամ «լրացում», օր. ծրագրի մը լրումը, ինչպես՝ լատիներեն perfectio կամ հունարեն teleutè։

Արդարև Խորենացիի երկը վերջ մը կպատմե, լավ ևս, վերջը Հայոց թագավորության, որուն կկապվի նաև վախճանը Ս. Գրիգոր Լուսավորչի Տունեն կաթողիկոսական հաջորդականության։

Այս վերջինս ունեցած է ժամանակակիցներուն համար շատ ավելի սուր և տրամային նշանակություն մը՝ քան ինչ որ կրնա ունենալ հայ ներկա սերունդներուն համար և կամ զոր կրնա վերագրել անոր, զուտ բանական եզրերով, որևիցե պատմական վերլուծում։ Թագավորությունը, Արշակունյաց հարստությունը ի մասնավորի, խորհրդանիշն էր Հայոց միության և մեծության, իսկ Լուսավորչի Տունը՝ երաշխիքը Հայ նվիրապետության «հաստատության», Հայոց եկեղեցվույն «անշարժության»։

Այս կրկնակի վերջը, բայց հատկապես թագավորության վախճանը, Պատմահոր համար կներկայացնե՝ ինքն իր մեջ «բացարձակ» վերջ մը, վերջ մը՝ որ չի կրնար «սրբագրվիլ», վերջ մը՝ որով տուժածը չի կրնար վերստացվիլ, վերաշահվիլ, վերստին համալրվիլ։ Բան մը վերջացած է հոն, ընդմիշտ։

Պատմության հետ բռնի խզումի մը այս ուժեղ զգայնությունը, որ Խորենացիի Պատմության Երրորդ հատածը առաջին իսկ տողերեն կներանցե և որ կբացատրե նաև Ողբին ներհայտորեն հայտնաբանական (apocalyptique) շեշտերը, մեր կարծիքով, կթվի տարամերժել որոշ ուսումնասիրներու կողմե առաջարկված վարկածը՝ թե այդ գործը արտադրություն մ'ըլլա Բագրատունյաց շրջանի։

Ամեն պարագայի, որքան որ նման վարկած մը արդեն իսկ ընդունելի չի թվիր մեզի, հարկավոր կնկատենք սակայն ավելցնել նաև հետևյալ նկատողությունը։ Այն հեռանկարեն՝ ուսկից կդիտե Խորենացի Հայոց պատմությունը զայն մեկնաբանելու և գնահատելու համար, նույնիսկ Բագրատունյաց շրջանի վերականգնումը, կամ նման որևէ այլ «վերադարձ», բավարար պիտի չըլլար վերահյուսելու և վերստին համալրելու Արշակունյաց անկումին պատճառած խզումը։

Ասիկա կհաստատե, ի միջի այլոց, նաև Սահակ կաթողիկոսի բռնած դիրքը, ըստ Խորենացիի, երբ Սասանյան արքունիքը, համոզելու համար զինք՝ հավանելու Արշակունյաց վերջին պայազատ Արտաշես Բ-ի գահընկեցության, մեծապես հանկուցիչ առաջարկ մը կներկայացնե իրեն՝ պատվեր իր թոռը, Վարդան Մամիկոնյանը, «զուգահավասար թագավորին և համապատիւ» (Գ, կդ)։ Սահակ կշրջանցե առաջարկը՝ իր դիվանագիտական նրբամտության արժանի խուսափուկ պատասխանով մը։ Մինչդեռ իր մերժումին

---

[6] էջ 477—479 ծան. 18։ Տե՛ս նաև՝ «Ellenismo, ebraismo, e cristianesimo, pp. 387—390։ «Ավարտաբանություն» եզրը կերևի միայն Գ դրքի կամ «Հատածի» տիտղոսին մեջ («Հատածի» բառի մասին, Խորենացիի մոտ, տե՛ս «L' idéologie nationale», էջ 477)։ Պատճառ մը չունինք՝ տիտղոսները և խորագիրները մաս չնկատելու նախնական խմբագրության։ Հատկապես, երբ մասերուն ալ տիտղոսները, իբր ոճույթ, մեկե ավելի չփման եզրեր կնշեն Պատմության ոճին հետ։ Բայց մանավանդ կարտահայտեն, շատ սեղմ լեզվով մը (այս ևս խորենացիական առանձնահատկություն), կորիղակետերը ինքնին՝ այդ Պատմությունը առաջորդող մայր գաղափարներուն։ Ամեն պարագայի, եթե նույնիսկ խմբագրական հաջորդական հանգրվանի մըն ալ պատկանին, կատարելապես կներդաշնվին պատումին ամբողջական «տրնտեսության» հետ, և ինչ որ մեզ այստեղ դիտավորապես կհետաքրքրե՝ դիրքին, դրվածքին «գաղափարախոսությունն» է՝ իբր դրվածք։

բուն պատճառն այն էր անշուշտ, որ ինք սասանյան առաջարկը կնկատեր իբր բավական ճկուն, բայց և դարանակալ փորձ մը՝ Հայաստանի ներքին կենսունակությունը չլատելով զայն վերջնականորեն նվաճելու։ Առաջարկին սիրահոժար ընդունելությունը իր կողմե իբր արդյունք պիտի ունենար՝ շիջումը և տակավ հեղձումը ազգային նոր ոգիին, ճիշտ այնպիսի պահու մը՝ երբ ատիկա կձևավորվեր ու կզարգանար առաջնորդելու համար հայերը սասանյան հարաճուն հավակնություններուն դեմ Վարդանանց ըմբոստության և հաջորդող տասնամյակներու պայքարին։ Պայքար՝ որ իր կնիքը պիտի դրոշմեր Հայոց պատմության ողջ հետագա հեղաշրջումին վրա։ Ինքը Սահակ, Մաշտոցի հետ միասին, գլխավոր ներշնչարանն ու կերտիչն էր հանդիսացեր՝ քրիստոնեական ոգիով ու Գրոց գյուտի գաղափարախոսությամբ խմորվող ազգային այդ նոր գիտակցության։

Խորենացիի հեռանկարով կդտնվինք, ուրեմն, «վերջի» մը հետ դեմ հանդիման, որ՝ ըստ իրեն՝ հստակորեն գուժված է արդեն Հայաստանի և Հայոց Թագավորության երկուքի բաժանումով 384—387-ին։ Կարևորագույնը, սակայն, սույն տեսության մեջ, այն է, որ ըստ Պատմահոր, այս ընդնըշմարումը, այս հայտնատեսությունն է, միանգամայն՝ կանխա—և հեռատեսություն, որ կմղե Մեսրոպը հղանալու իր գյուտը և լծվելու անոր իրագործումին։ Ուշագրավ է այս տեսակետեն, թե ինչպես Խորենացին կսկսի ներկայացնել դիրերու գյուտարարին կերպարը, իր Պատմության մեջ, շատ տարբեր՝ համագրային (contextue) այն վերծանումեն, զոր կկատարե, օրինակ, Փարպեցի մը։ Արդարև, բացատրելու համար Մեսրոպի գործը՝ Խորենացի կգրե. «Տեսնելով որ Հայոց Թագավորությունը իր վախճանին հասած է...»։ Բայց երևույթները բնավ չէին թելադրեր նման վարկած մը, գեթ իբր անմիջական, քանի որ արևելյան Հայքի մեջ Վռամշապուհ փառոք կթագավորեր[7]։

Խնդրո առարկա վերջը կկազմե, ուրեմն, ավարտաբանական խզումի պահը։ Ստուգիվ, ան կնշե խզումը պատմության մը հետ՝ որ կանհետանա։ Բայց ճիշտ այդ միևնույն պահուն է, որ կմիջամխի կամ, լավ ևս, կշղթայազերծի ավարտաբանական, տրամասությունը, այնու որ քանդիչ, ավերիչ, ողբերգական այդ վերջը կդառնա, միանգամայն և հարտկարծորեն, հանգում մը, կատարում մը, լրում մը, ուսկից նոր հառաջընթացք մը կծավալի, նոր հեղաշրջում մը կշղթայազերծի, նոր կենսունակություն մը կվերընձյուղի։ Ահա տրամասական պահը՝ ավարտաբանական փոխակերպումին։

Այս տրամասությունը, խզումի և փոխակերպումի այս հարակարծությունը, սակայն, պատմական հեղաշրջումին շատ բնականոն մեկ երևույթն է, անկասկած. գուցե և անոր էությունն իսկ կկազմե։ Ո՞րն է, ուրեմն, այն վճռական տարը, որ, Խորենացիի մոտ, սույն տրամասությունը «ավարտաբանության» կփոխակերպե։ Կկարծենք, թե հետևյալ ազդակներն են, որ կդիմորոշեն այդ վճռական տարրը կամ տարրերը.

Ա. Սա իրողությունը՝ թե խզումը, և որով՝ անկե հառաջագայող վերջը, կվերաբերին ոչ թե պատմության որոշ մեկ պահուն կամ հանգրվանին, այլ պարզապես՝ Պատմության մը, այսինքն Պատմության մը, որ հանրագումարը կներկայացնե պատմական պահերուն կամ հանգրվաններուն, որոնք Պատմությունը իբր պատմություն կկազմեն. Պատմությունը մարդուն կամ մարդկության՝ իր ամենեն համընդգրկիչ տարածականությամբ։

Բ. Այդ գումարը կիրականանա ժողովուրդներու և ազգերու Պատմության մեջ։ Հոն է, որ կիրագործվի հառաջընթացքը բոլորական հեղաշրջումի մը՝ իր սկիզբներեն—«հնախոսական» հանգրվանը—մինչև վախճանական հանգրվանը, այսինքն՝ «ավարտաբանությունը», անցնելով «միջին», «հառաջադիմության» հանգրվանեն։

Մեր նախընթաց ուսումնասիրություններուն մեջ, մանրամասնորեն վեր-

[7] Գ. Խր. Տե՛ս այս մասին՝ «L'„Ideologie" nationale». pp. 384—386.

լուծած ենք արդեն աղբյուրները, ձևավորումը և պարունակները՝ Խորենացիի մոտ «ազգ» և «հայրենիք» հղացքներուն, վեր հանելով իր հղացումին ինքնատպությունը՝ նկատմամբ հունական և եբրայական հղացումներուն, որոնք կմնան սակայն ներշնչումի գլխավոր աղբյուրները իր «գաղափարախոսական» քայլարկումին։ Մեր այդ վերլուծումներեն երևան կուգար, որ Խորենացիի ինքնատպությունը կկայանա գլխավորապես սա հետևյալ երկու կետերուն մեջ[8]։

Ա. Այն՝ թե Խորենացի ազգի կամ «էթնոսի» իր հասկացությունը կբանաձևե մեկնելով խնդրո առարկա խումբին հավաքական գիտակցութենեն և նույնինքն այդ գիտակցության մեջ հայտնվող պատմական ու մշակութային հասարակաց բնութագիրներեն՝ անդրադանցելով կրոնական հավատալիքը։ Այսպես, Խորենացի ազգային կամ էթնիկ գիտակցությունը կձերբաղատե եբրայական գաղափարախոսության յուրահատուկ կրոնական պայմանավորումներեն, բանաձևված հատկապես Աղեքսանդրյան ծիրին մեջ, ուր սփյուռքային իրադրության մղումով՝ մասնավորապես զարգացած էր հրեության ազգային գիտակցությունը։

Կկարծենք թե չափազանցած պիտի չըլլանք, եթե Խորենացին նկատենք իբրև հիմնադիրներեն մեկը «ազգ» գաղափարին աշխարհայնական (laique) հղացումին, ըմբռնված՝ իբր պատմական (առանց մոռանալու սակայն «ազգաբանությունը» կամ «տոհմագրությունը»), լեզվական ու մշակութային հիմքային միութենե մը բխող հասարակություն մը։

Բ. Այն թե՝ Խորենացի կբանա ազգային այս իրականությունը դեպի ինչ որ ինք կկոչե «քաղաքական կարգը», հունական πολιτεια, մեր «քաղաքակրթությունը», անդրադանցելով հունական (ինչպես նաև բոլոր «մեծ» մշակույթներուն տարբեր եզրերով հասարակաց) «բարբարոս» դաղափարին ներդիր «ցեղային» և էթնիկ պատվարները, նոր տեսությամբ մը՝ ըստ որուն ոչ հույն ժողովուրդներն ալ կրնային հաղորդ դառնալ հույներու իմաստության—հույներու՝ զոր ինք կկոչե «մայրն ու դայակները իմաստության»—, լրիվ պահելով հանդերձ իրենց ազգային ինքնությունն ու գիտակցությունը[9]։

Այս հաստակումներեն ետք՝ Խորենացիական «ազգ» գաղափարին նկատմամբ, հարկ է հիմա ավելցնել՝ թե կարելի չէ անպայման կիրարկել ավարտաբանական ստորոգումը սկիզբ մը ու վերջ մը ունեցող ամեն «ազգային» պատմության համար։ Անշուշտ, հարցը բացահայտորեն արծարծված չէ Խորենացիին, բայց հարցին պատասխանը կկերպագրվի բովանդակ այն համագիրեն՝ որուն մեջ Խորենացի կհառաջացնե Հայոց պատմության իր պատումը։

Արդարև, ավարտաբանական տեսությունը անհրաժեշտորեն կներփակե՝ համընկլուզման (cataclysme) հաջորդող համընդհանուր վերանորոգումի, վերածնության, վերականգնումի գաղափարը և հույսը։ Սույն տեսությունը, թեպետև ընդհատակյա, առանց որևէ կասկածի, առկա է Խորենացիի Պատմության եզրափակումին մեջ։ Ան ենթալարի մը պես կներառնցե այդ Պատմության ներուժայնությունը, որ կձգտի Հայոց պատմության վերահիմնավորումին նոր և տարբեր հարթակի մը վրա քան այն՝ որ ցարդ երաշխավորած էր անոր շարունակականությունը և որ հարթակն էր արքայական և տոհմային հաստատություններուն։ Իսկ նոր հարթակը, ընդհակառակն, այն է՝ զոր սկզբնավորած է Սահակի և Մեսրոպի գործը, որ ազգին հիմքային, էական

---

8 Տե՛ս անգ. էջ 472—477։ Ellenismo, ebraismo e cristianesimo, pp. 384—386.

9 Անկասկած՝ հույն մշակույթը բաց էր ամենուն համար և բավական թիվով հույն մշակույթի ներկայացուցիչներ ծագումով հույն չէին։ Սակայն, հույն մշակույթին յուրացումը կներփակեր կամ կենթադրեր, իր կարգին, հունացման հառաջընթացք մը, լեզվական ու նաև՝ գրեթե էթնիկական (կամ ազգային)։ Հույն աշխարհին մեջ «բարբարոս» հղացքի մասին տե՛ս M. Pohlenz. *Der hellenische Mensch.* Vandenhoeck and Ruprecht, Göttingen, 1947, գլ. VII, նաև գլ. XIV, XVI և վերջաբանը։

միությունը կտեղափոխե Թագավորության, Հարստության կամ թե Պետության հարթակեն դեպի հարթակը մշակութային գիտակցության, գրավորական մշակույթին՝ մասնավորապես։ Սահակի և Մեսրոպի աշակերտները, որոնք կսփռվին ամբողջ Հայաստանի տարածքին՝ ժառանգելով իրենց հոգևոր հայրերուն հեղինակությունն ու շնորհապարգևը (charisme) երաշխավորներն են վերածնության և շարունակականության։

Այսպես կվերջանա Խորենացիի Պատմությունը։ Ողբը, որ կհաջորդե, եթե արտաղացնորեն կշեշտե քարուքանդումի երևույթները,— հետևելով նաև՝ նույնիսկ վաղ միջին դարուն բավական ընթացիկ գրական գործընթացներու,— չի վրիպիր սակայն զանոնք փրկանավորելե այնու իսկ, որ այդ պատմական կոթողը, որ Խորենացիի Մատյանն է, կհանձնվի գալիք սերունդներու հիշողության, ինչպես կհայտարարվի դիրքին առաջին էջերեն[10]։

Պատմության ավարտաբանական տեսություն մը, իր բնությամբ իսկ, գերազանցորեն վախճանաբանական (téléologique) տեսություն մըն է։ Ավարտին, էսխատոնին, իր հետ բերած տեղափոխությամբ ու փոխակերպումով՝ Պատմությունը կհասնի իր նպատակին, իր վախճանականության (finalité), իր կատարին։

Այս տվյալի հիման վրա Խորենացիի Պատմության ըմբռնումը, որ Հայոց պատմության մեջ կգտնե իր կիրարկումի ասպարեզը, բայց որ չի սպառեր այնտեղ իր բովանդակ կարողականությունները, յուրահատուկ համադրություն մը կիրականացնե Պատմության ուղղագծային (linéaire) և շրջանաբերային (cyclique) հղացումներուն միջև։ Ուղղագծային՝ իր վախճանաբանությամբ, շրջանաբերային՝ վերանորոգումի իր կարողականություններով, ավարտաբանական իր լարումներով և ներուժայնություններով։

Այս նկատողություններու լույսին ներքև հիմա կրնանք լավագույնս հասկնալ նաև «սրբազան» բնույթը այն հառաջընթացքին՝ որ Խորենացիի համար «ավարտաբանություն» մը կդառնա, քանի որ, ինչպես արդեն մատնանշեցինք, ավարտաբանության հասկացությունը ինքնին սրբագնային համանշում (connotation) մը ունի։ Արդարև, ավարտաբանության հասկացության մեջ ներփակված սա բոլոր էական տարրերը, ինչպես՝ վերանորոգում, վերածնություն, վերհամայրում և այլն, կկապվին տիեզերական վերանորոգումի բնական շրջանաբերությենեն հառաջագայող հասկացություններու, այնինչ որ Միրչեա Էլիադ կկոչեր «հավիտենական վերադարձը»։ Եվ բնությունը, տիեզերքը, ինքնին սրբազան են, սրբազնության այն հնավանդ իմաստով, զոր միջին դարու մարդը տակավին կորսնցուցած չէր։ Ուստի՝ սրբազնությունը նաև ընկերային երևույթներուն, ամուսնության, ծննդաբերության, կլանին, տոհմին, ժողովուրդին, ազգին։

Խորենացի կառանձնացնե ազգի, պատմական էթնոսի գաղափարը՝ կրոնական պայմանավորումներեն, ավելի ճիշտ՝ կրոնքի տիպեն, պահպանելու համար անոր սկզբնակետային սրբազնությունը՝ որ է սրբազնությունը ամեն իրականության, որ կսերի տիեզերքի կամ մարդուն բնության հառաջընթացքներեն։ Ու նաև սրբազնային այս հիմնավորումն է, որ կպարունակե պատմության, հայրենիքի, ազգի, մարդկային ընկերության ավարտաբանական և վախճանաբանական տեսության հեռանկարին և համածիրին մեջ, սերմերը ազգության առողջ աստվածաբանության մը, որուն ինքնատպությունն ու վավերականությունը փորձած ենք այլուր ապացուցնել[11]։

---

[10] Ա. ա։ Տե՛ս «L'«idéologie» nationale», pp. 478—479.

[11] Տե՛ս Ellenismo, ebraismo e cristianesimo.